

Մելգոնեանը Ծախողներուն

Կ'ուզեն պաշտպանել դատը Մելգոնեան Եղբայրներու
Ես թռնիկներէն մէկը կ'եսարացի ընտանիքէ
Այս որոշումէն մտածումըս կ'երթայ շատ հեռու
Պարոն Պերճ Սեդրակեան բնաւ չէք վախնար անէծքէ:

Իսկ դուք պարոն Կորտըն թուրքին չըրածը կ'ամբողջացնէք
Այս մեծ առ ու ծախէն դուք ձեզ բաժին պիտի հանէ՞ք
Քանդելով օճախ հայեցի դաստիարակութեան
Վերջին փարոսի լոյսը Սուրբ Մեսրոպի դպրութեան:

Որոշուած է թէ ո՞ր տեղափոխել դամբանները
Ուր հանգիստ մը կը ննջեն Մելգոնեան Եղբայրները
Պուլկարիա, Ռումանիա կամ հեռու Աւստրալիաներ
Հայաստան, Սուրիա, թէ ձեր քով, Միացեալ Նահանգներ:

Մենք աշխարհատարած սաները Մելգոնեանի
Թոյլ չենք տար բնաւ մեր կրթարան օճախը մարի
Իրմով հպարտ ենք ունեցանք ամփոխ մը անուանի
Երանի դուք ալ ըլլայիք սանը մեր վարժարանի:

Մեր երկրորդ ծնողքներըն էին ուսուցիչ, տնօրէն
Իրենց յորդորներուն կը հետեւէինք լրջօրէն
Ունեցանք կրթութիւն գիտակցութիւն Մայրենիին
Հայ գիրին ու բանին և նահատակ մեր Հայ Ցեղին:

Մերք Հրաչեայ կ'ուզեն գաս մէյ մը Անդենականէն
Լսելու Պերճին առած խորհուրդը Անտերսընէն
Կ'ուզեն քանդել ու այրել օճախ մը հայակերտման
Հայերուս շատ սիրելի ուսումնարանը Մելգոնեան:

Վերջին պատգամ ով բարեսիրտ մտածումով հայեր
Մելգոնեաններու ձեզի փոխանցածը կտակ էր
Լուրը տակաւին չէ հասած ի Մեսրոպ Մաշտոց
Անէծք պիտի տեղայ գլխուն այս տեսակի մարդոց:

Ռաֆայէլ Սերոբեան
Պէյրուք, 11.03.2004